ՀԱՇՎԵՔՆՆԻՉ
ՊԱԼԱՏ

ՀԵՏՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված Հաշվեքննիչ պալատի
2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 86–Ա որոշման

Օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության առաջարկությունների կատարման վերաբերյալ

ԿՀՀ-0002-25-02 **2025**

Հաշվեքննիչ պալատի առաքելությունն է՝ նպաստել հանրային կառավարումը **բարելավելուն**:

Դրան հասնելու համար Հաշվեքննիչ պալատն իրականացնում է հաշվեքննության արդյունքներից բխող **առաջարկությունների կատարման նկատմամբ հետհսկողություն**՝ այդ մասին պարբերաբար տրամադրելով մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանը:

Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական հաշվեքննության (հանրային հատվածում արտաքին աուդիտի) ոլորտում քաղաքականությունը մշակող, հաստատող և իրականացնող անկախ պետական մարմինն է: Յուրաքանչյուր տարի Հաշվեքննիչ պալատն ընդունում է իր գործունեության ծրագիրը՝ ելնելով հաշվեքննության առաջնահերթ ուղղություններից: Հաշվեքննությունների իրականացմամբ Հաշվեքննիչ պալատը գնահատում է հանրային միջոցների կառավարման արդյունավետությունը (կատարողականի հաշվեքննություններ) և օրինականությունը (ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ): Իր գործունեության ընթացքում Հաշվեքննիչ պալատը ղեկավարվում է թափանցիկության ու հաշվետվողականության արժեքներով և պարբերաբար հանրությանը, Ազգային ժողովին և Կառավարությանն է ներկայացնում հաշվետվություններ հանրային միջոցների կառավարման արդյունավետության և օրինականության վերաբերյալ: Հաշվեքննիչ պալատի առանցքային նպատակադրումն է՝ համակարգային խնդիրների վերհանման և լուծումների առաջարկների միջոցով նպաստել քաղաքացու կյանքում դրական փոփոխություններին:

Միջնաժամկետ հորիզոնում Հաշվեքննիչ պալատը նպատակադրել է՝ **մարդակենտրոն հաշվեքննությունների** միջոցով նպաստել մարդու պահանջմունքներն արդյունավետորեն հասցեագրող հանրային կառավարմանը և միջազգային լավագույն փորձին համահունչ՝ պետության **ինստիտուցիոնալ** կարողությունների զարգացմանը:

Այդ նպատակով իրականացվող կատարողականի հաշվեքննության առաջնահերթություններից է «Մարդուն շրջապատող **մաքուր** և անվտանգ միջավայրը»:

Հաշվեքննության առաջնահերթությունները սահմանվում են՝ ելնելով հաշվեքննության գործառույթի միջոցով հանրային շահին միտված հավելյալ արժեք ստեղծելու ներուժից, հիմնախնդրի էականությունից և հաշվեքննելիությունից: Միջնաժամկետ հորիզոնում արտաքին պետական հաշվեքննության 7 առաջնահերթություններն են հանդիսանալու՝ (1) Մարդուն մատչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահությունը, (2) Մարդուն մատչելի և որակյալ ցկյանս կրթությունը, (3) Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայրը, (4) Մարդուն մատչելի և արդյունավետ արդարադատությունը, (5) Արտահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացումը, (6) Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների զարգացումը, (7) Ներդաշնակ զարգացող համայնքները: Հաշվեքննության առաջնահերթություններին, ինչպես նաև յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակում ձևակերպված հաշվեքննության հիմնական ուղղություններին հնարավոր է ծանոթանալ «Հաշվեքննիչ պալատի 2026-2028թթ. առաջնահերթությունները» փաստաթղթում, որի էլեկտրոնային տարբերակը հասանելի է Հաշվեքննիչ պալատի պաշտոնական կայքում. www.armsai.am:

Բովանդակություն

Հապավումներ **5**

Ամփոփագիր **6**

Ներածություն **7**

Առաջընթացը **12**

Օդի որակի ՀՀ ստանդարտները ներդաշնակեցվել են գիտականորեն հիմնավորված միջազգային ստանդարտներին 12

Առկա է առաջընթաց մթնոլորտային օդի որակի համակարգային կառավարման համար անհրաժեշտ տվյալների ստացման ուղղությամբ 15

Ներդրվել է տվյալ բնագավառում հանրային կառավարման մարմինների գործողությունների կոորդինացման մեխանիզմ 22

Հետագա բարելավման ներուժը **25**

Թիրախներ 25

Ռազմավարություն 27

Հետիսկողության մասին **31**

Հապավումներ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԶՆ	Կայուն զարգացման նպատակներ
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄՕՊՄՕ	«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենք
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ամփոփագիր

1. Այս հաշվետվությունն ամփոփում է «Օդի[1] աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության» *առաջարկությունների կատարման ուղղությամբ,* 2025 թվականի ապրիլից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում, տեղի ունեցած *առաջընթացը*[2]:

2. Մասնավորապես, առկա է առաջընթաց առաջարկությունների ավելի քան **60%**-ի ուղղությամբ[3]: Այն հիմնականում արտահայտվել է օդի որակի ստանդարտների և ոլորտային այլ կարգավորումների լավարկմամբ, օդի որակի մշտադիտարկման համակարգի արդիականացմանն ուղղված քայլերով, ինչպես նաև կոորդինացման մեխանիզմի ներդրմամբ: Վերջիններս ձևավորում են անհրաժեշտ ինստիտուցիոնալ հենք՝ օդի աղտոտվածության նվազեցման բնագավառում պետական քաղաքականության արդյունքային ցուցանիշների (թիրախների) սահմանման և դրանց ապահովման ռազմավարության մշակման համար, որի հետագա իրականացումից կախված կլինի երկրում օդի աղտոտվածության նվազեցման նպատակի *համակարգային* հասցեագրումը[4]:

3. Հաշվի առնելով առաջարկությունների կատարման, դրանց գործողության ուժի մեջ մտնելու համար սահմանված անցումային ժամկետները, ինչպես նաև վերանայված ինստիտուցիոնալ մեխանիզմների գործնական կիրարկման անհրաժեշտությունը, դրանց փաստացի ազդեցությունը օդի աղտոտվածության նվազեցման վրա կդրսևորվի միջնաժամկետ և երկարաժամկետ հորիզոններում:

4. Օդի աղտոտվածության հիմնախնդիրը շարունակելու է տեղ գտնել Հաշվեքննիչ պալատի միջնաժամկետ առաջնահերթությունների շարքում՝ որպես հետհսկողության առաջնահերթ ուղղություն[5]:

---

[1] Հաշվեքննությունը կենտրոնացել էր *մթնոլորտային օդի* աղտոտվածության վրա: Մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացության (ԿՀ-0004-25-03) 10-րդ կետում:

[2] Այս հաշվետվությունը չի կրկնում հաշվեքննության բոլոր արձանագրումները: Վերջիններս ներկայացված են Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի ապրիլի 15-ի թիվ 27-Ա որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությունում (ԿՀ-0004-25-03):

[3] Առաջընթացի առկայությունը չի նշանակում, որ առաջարկությունն ամբողջությամբ կատարվել է և այն պայմանավորող բոլոր հիմնախնդիրները լուծվել են, ինչպես նաև առաջընթաց տեղի չունենալը չի նշանակում, որ այդ ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել: Առաջընթացի վերաբերյալ արձանագրումը կատարվում է մասնագիտական դատողության հիման վրա՝ առաջնորդվելով էականության սկզբունքով: Հետհսկողությունը շարունակական գործընթաց է, որի դինամիկան ներկայացվելու է պարբերական հաշվետվությունների միջոցով:

[4] Մասնավորապես, խոսքը գնում է հաշվեքննության դեռևս չկատարված 4-րդ և 5-րդ առաջարկությունների մասին, որոնց անդրադարձ է կատարված այս հաշվետվության «Հետագա բարելավման ներուժը» բաժնում:

[5] «Հաշվեքննության 2026-2028 թվականների առաջնահերթություններ», կետ 3.9:

Ներածություն

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

5. Օդի աղտոտվածության նվազեցումը սահմանվել էր որպես հաշվեքննության առաջնահերթ ուղղություն՝ 2023 թվականի նոյեմբերին Հաշվեքննիչ պալատի հաստատած միջնաժամկետ առաջնահերթությունների շրջանակում: *Նկատի էր առնվել այն հանգամանքը, որ օդի աղտոտվածությունը մարդու առողջության վրա ազդող և վաղաժամ մահերը պայմանավորող ամենամեծ բնապահպանական ռիսկն է*[6]*:*

6. Հաշվեքննությունը կատարվել էր 2024 թվականի փետրվարից մինչև 2025 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննությամբ արձանագրվել էին տվյալ բնագավառում հանրային կառավարման մի շարք հիմնախնդիրներ և ներկայացվել դրանց լուծմանն ուղղված՝ **համակարգային բնույթի 7 առաջարկություններ**: Հաշվեքննության արդյունքներն ամփոփված են 2025 թվականի ապրիլին Հաշվեքննիչ պալատի հաստատած ընթացիկ եզրակացությունում:

7. Շրջակա միջավայրի նախարարի հրամանով 2025 թվականի հունիսին հաստատվել և Հաշվեքննիչ պալատ է ներկայացվել հաշվեքննության բոլոր առաջարկություններն ընդգրկող միջոցառումների ծրագիրը:

8. Հաշվեքննության նպատակին, չափանիշներին, արդյունքներին ու առաջարկություններին, ինչպես նաև այլ մանրամասներին հնարավոր է ծանոթանալ Հաշվեքննիչ պալատի հաստատած ընթացիկ եզրակացությունում (ԿՀ-0004-25-03):

[6] Մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացության (ԿՀ-0004-25-03) 1-6-րդ կետերում:

ՀԵՏՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

9. Հաշվեքննության հաշվետվության (ընթացիկ եզրակացության) հրապարակումից հետո պարբերաբար իրականացվում է հետհսկողություն (follow-up) հաշվեքննության արդյունքով ներկայացված առաջարկությունների, դրանցից բխող միջոցառումների կատարման վերաբերյալ: Հետհսկողության արդյունքները ներկայացվում են հանրությանը, Ազգային ժողովին ու Կառավարությանը՝ խթանելու համար հաշվետվողականությունը, թափանցիկությունը և արդյունավետ հանրային կառավարումը:

10. Այս հաշվետվությամբ ներկայացվում են օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության առաջարկությունների կատարման առաջին հետհսկողության արդյունքները: Հետհսկողությունն ընդգրկել է 2025 թվականի ապրիլից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածը: Հետհսկողությանը վերաբերող հավելյալ տեղեկատվությունն ամփոփված է այս հաշվետվության «Հետհսկողության մասին» բաժնում:

ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

11. Հետհսկողությունն ընդգրկող ժամանակահատվածում Կառավարության հետևողականության և Շրջակա միջավայրի նախարարության իրականացրած աշխատանքների արդյունքում, արձանագրվել է որոշակի առաջընթաց «Օդի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության» առաջարկությունների կատարման ուղղությամբ: Մասնավորապես.

- օդի որակի ՀՀ ստանդարտները ներդաշնակեցվել են գիտականորեն հիմնավորված միջազգային ստանդարտներին.
- մշակվել է մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման ծրագիր և մեկնարկել է դրա իրականացումը.
- քայլեր են ձեռնարկվել մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների համապարփակ տվյալներ ունենալու ուղղությամբ (գույքագրման ուղեցույցների մշակում).
- քայլեր են ձեռնարկվել օդի որակի պահպանության համայնքային պլանների իրավական հիմքերի ձևավորման ուղղությամբ.
- ստեղծվել է տվյալ բնագավառում հանրային կառավարման մարմինների գործողությունների կոորդինացման մեխանիզմ (միջգերատեսչական աշխատանքային խումբ):

12. Մանրամասները ներկայացված են այս հաշվետվության «Առաջընթացը» բաժնում:

ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

13. Դեռևս չկատարված (կատարման ընթացքում գտնվող) հաշվեքննության առաջարկությունների ուղղությամբ առաջընթացին անդրադարձ կկատարվի հետհսկողության հաջորդ հաշվետվություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հետևյալ ուղղություններով առաջարկությունների իրականացմանը և դրանք պայմանավորող հիմնախնդիրների լուծմանը.

- օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի և ոլորտային արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշների սահմանում.
- օդի որակի բարելավման ռազմավարության մշակում.
- օդի որակի նոր ստանդարտների աստիճանական կիրառություն.
- օդի որակի մշտադիտարկման համակարգի արդիականացման ծրագրի կատարում և արդյունքում՝ վնասակար նյութերի կոնցենտրացիաների վերաբերյալ որակյալ տվյալների ստացում.
- մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների համապարփակ գույքագրման արդյունքների ստացում.
- համապետական, մարզային և համայնքային մակարդակներում օդի որակի ներդաշնակեցված կառավարման համակարգի գործունեություն:

14. Մանրամասները ներկայացված են այս հաշվետվության «Հետագա բարելավման ներուժը» բաժնում:

15. Հաշվեքննության առաջարկությունների ամբողջական կատարումը պարունակում է ազդեցության դրական ներուժ.

- **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից**, այն է՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովումը՝ այն աղտոտումից (բնական և տեխնածին) պաշտպանելու միջոցով: Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից՝ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է գիտականորեն հիմնավորված միջոցառումներ, որոնց նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները... (ՄՕՊՄՕ, հոդվ. 3, մաս 1, կետ 1, նախաբան).
- **ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ[7]»-ի** թիրախներին հասնելու տեսանկյունից, այդ թվում՝ մինչև 2030թ. էականորեն կրճատելու օդի աղտոտվածությունից մահերը (թիրախ 3.9, ցուցիչ 3.9.1).
- Օդի որակի ոլորտում ՀՀ-ԵՄ-ի Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի **(CEPA)** պահանջների կատարման տեսանկյունից, ըստ որի համագործակցությունը, ի թիվս այլոց, պետք է ընդգրկի նաև հետևյալ նպատակները՝ ՀՀ համար ոլորտային *ռազմավարությունների մշակում* (այդ թվում՝ գործողությունների իրականացման հստակ սահմանված ժամանակացույցները և հենանիշները, վարչական պատասխանատվությունները, ինչպես նաև՝ ենթակառուցվածքներում ու տեխնոլոգիաներում ներդրումների ֆինանսավորման ռազմավարությունները), որոնք առնչվում են՝ *օդի որակին* (հոդվ. 46 (1) (b), հոդվ. 48 (b) (i)):
- ՀՀ կողմից վավերացված **ՄԱԿ-ի «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի** («օդի կոնվենցիա») պահանջների կատարման տեսանկյունից, որով և իր արձանագրություններով երկրները պատրաստակամություն են հայտնում պաշտպանել մարդուն և իրեն շրջապատող միջավայրը օդի աղտոտումից և ձգտում են որքան հնարավոր է սահմանափակել և կանխել օդի աղտոտումը...:

[7] Transforming our world: The 2030 Agenda for Sustainable Development. Resolution 70/1 adopted by the General Assembly on 25 September 2015.

- **Կառավարության 2021-2026թթ. ծրագրի** կատարման տեսանկյունից, ըստ որի. «շրջակա միջավայրի կառավարման առաջնահերթ ուղղություններից է լինելու բնապահպանական օրենսդրության ներդաշնակեցումը ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի հրահանգներին… մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը, հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացումը՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ…» (4.10-րդ կետ):

Առաջընթացը

Օդի որակի ՀՀ ստանդարտները ներդաշնակեցվել են գիտականորեն հիմնավորված միջազգային ստանդարտներին

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

16. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ օդի որակի ՀՀ ստանդարտները[8] չեն ապահովում օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն: Հաշվեքննության չափանիշների համատեքստում դիտարկվել էին մարդու առողջության վրա օդի աղտոտվածության ազդեցության գնահատման միջազգային գիտական հետազոտություններն ամփոփող՝ ԱՀԿ-ի համաշխարհային օդի որակի ուղեցույցն ու վերաբերելի ԵՄ ստանդարտները: Արձանագրվել էր, որ ՀՀ-ում օդի որակի տարեկան նորմատիվներ սահմանված չեն եղել: Միջին օրական նորմատիվներին զուգահեռ, սահմանված չեն եղել նաև տարվա ընթացքում օրերի սահմանափակումներ, երբ միջին օրական նորմատիվների գերազանցումները կարող էին թույլատրելի համարվել:

[8] ՀՀ օրենսդրությունում կիրառվում է մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիա (ՍԹԿ), սահմանային արժեք, նպատակային արժեք և այլ հասկացություններ:

17. Օրինակ, ըստ ԱՀԿ-ի, հիմնական վնասակար նյութի՝ $PM_{2.5}$ կախված մասնիկների տարեկան կոնցենտրացիայի վերջնական թիրախը 5 մկգ/մ^3 է (դրան հասնելու միջանկյալ 35, 25, 15 և 10 մկգ/մ^3 թիրախներով), իսկ միջին օրական կոնցենտրացիայի վերջնական թիրախը 15 մկգ/մ^3 է (75, 50, 37.5 և 25 մկգ/մ^3 միջանկյալ թիրախներով): Սակայն զուգահեռ սահմանվում է, որ միջին օրական ցուցանիշը պետք է ապահովվի 99-րդ պերցենտիլով, այսինքն՝ թույլատրելի գերազանցումները կարող են լինել տարեկան 3-4 օր միայն: ՀՀ-ում $PM_{2.5}$-ի միջին օրական ստանդարտը սահմանված է եղել 35 մկգ/մ^3: Տարեկան նորմատիվի, ինչպես նաև տարվա ընթացքում օրական նորմատիվի թույլատրելի գերազանցումների պահանջի բացակայության պայմաններում, տարվա բոլոր օրերին ընդհուպ մինչև 35 մկգ/մ^3 կոնցենտրացիան, այսինքն՝ միջին տարեկան՝ 35 մկգ/մ^3 ցուցանիշը կհամարվեր նորմատիվին բավարարող, որը, սակայն, գերազանցում է ԱՀԿ ստանդարտը **700%-ով**:

18. Գիտականորեն հիմնավորված մակարդակներին զիջող ստանդարտների պայմաններում առաջանում է մի իրավիճակ, երբ հնարավոր չէ պլանավորել օդի աղտոտվածության նվազեցման միջոցառումների այնպիսի ամբողջություն, որոնց համախառն ազդեցությունը թույլ կտար արդյունավետորեն կառավարել մարդու առողջության վրա օդի աղտոտվածության բացասական ներգործությունները: *Այլ կերպ ասած, սահմանված թույլ ստանդարտներին ամբողջությամբ բավարարելն անգամ չի երաշխավորի օդի պահպանության բնագավառում պետության սահմանած նպատակների[9] ապահովումը[10] (նպատակային արդյունավետությունը):*

19. Ըստ ՇՄՆ-ի, ՀՀ-ում օդի որակի նախկին ստանդարտները (ՍԹԿ-ներ) սահմանվել էին ՌԴ-ում գործող համանուն ստանդարտի հիման վրա[11]: Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն, ՀՀ-ում իրականացված, ՀՀ տարածքին վերաբերելի գիտական հետազոտություններից բխող հիմնավորումներ տվյալ նորմատիվների հիմքում դրված չէին եղել:

20. Ըստ այդմ, առաջարկվել էր մթնոլորտային օդն աղտոտող նյութերի՝ ՀՀ-ում գործող ստանդարտների *կազմն ու մակարդակը* ներդաշնակեցնել գիտականորեն հիմնավորված միջազգային ստանդարտներին *(Առաջարկություն N 1)*:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

21. Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1142-Ն որոշմամբ հաստատվել են մթնոլորտային օդի որակի նոր ստանդարտները՝ ներդաշնակեցնելով համընդունելի միջազգային ստանդարտներին, այդ թվում՝ սահմանելով տարեկան ստանդարտներ, ինչպես նաև թույլատրելի գերազանցումների պահանջներ:

22. Օրինակ, հիմնական վնասակար նյութի՝ $PM_{2.5}$ կախված մասնիկների գծով, մինչև 2025 թվականի օգոստոսի 14-ի որոշումը սահմանված միջին օրական 35 մկգ/մ^3 սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի փոխարեն, սահմանվել են օդի որակի հետևյալ ստանդարտները.

- միջին օրական սահմանային արժեքը[12]՝ 25 մկգ/մ3, որը չպետք է գերազանցվի օրացուցային տարվա ընթացքում ավելի քան 18 անգամ (2030թ. հունվարի 1-ից).
- միջին տարեկան սահմանային արժեքը՝ 10 մկգ/մ3 (2030թ. հունվարի 1-ից).
- միջին օրական նպատակային արժեքը13՝ 15 մկգ/մ3 (2035թ. հունվարի 1-ից), որը չպետք է գերազանցվի օրացուցային տարվա ընթացքում 3 օրից ավելի (99-րդ տոկոսային արժեք).
- միջին տարեկան նպատակային արժեքը՝ 5 մկգ/մ3 (2035թ. հունվարի 1-ից):

23. Հարկ է նկատել, որ Կառավարության որոշման համաձայն, նշված վերանայված ստանդարտները գործողության ուժի մեջ են մտնելու երկու փուլով՝ նախ 2030թ., ապա՝ 2035թ. հունվարի 1-ից: Ըստ ՇՄՆ-ի, անցումային ժամկետները պայմանավորված են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ իրականացնելու համար դիտակայանների նվազագույն ծածկույթի ապահովմամբ[14]: Միևնույն ժամանակ, Նախարարությունը հայտնել է, որ ավելի վաղ ժամկետում մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի նվազագույն ծածկույթի ապահովման դեպքում որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը կվերանայվի:

---

[9] Օրենքով որպես նպատակ է սահմանված **մարդու առողջության** և շրջակա միջավայրի **համար** բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովումը՝ այն աղտոտումից (բնական և տեխնածին) պաշտպանելու միջոցով: Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից՝ Հայաստանի Հանրապետությունը կիրառում է **գիտականորեն հիմնավորված միջոցառումներ**, որոնց նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները... (ՄՕՊՄՕ, հոդվ. 3, մաս 1, կետ 1, նախաբան):

[10] Մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացության (ԿՀ-0004-25-03) 13-23-րդ կետերում:

[11] ГН 2.1.6.1338-03 «Предельно допустимые концентрации (ПДК) загрязняющих веществ в атмосферном воздухе населенных мест» (приложение), и поправки, «Перечень и коды веществ, загрязняющих атмосферный воздух» 2010г.

[12] **Սահմանային արժեքը** գիտական հիմքերով սահմանված մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի մակարդակն է, որը չգերազանցելու դեպքում հնարավոր է կանխել կամ նվազեցնել **մարդու առողջության վրա** բացասական ազդեցությունը (Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1142-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետ):

[13] **Նպատակային արժեքը** գիտական հիմքերով սահմանված մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի մակարդակն է, որին պետք է հասնել նախատեսված ժամանակահատվածում և այն չգերազանցելու դեպքում հնարավոր է խուսափել, կանխել կամ նվազեցնել **մարդու առողջության վրա** բացասական ազդեցությունը (Կառավարության 2025 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1142-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետ):

[14] Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի թիվ 611-Լ որոշում:

Առկա է առաջընթաց մթնոլորտային օդի որակի համակարգային կառավարման համար անհրաժեշտ տվյալների ստացման ուղղությամբ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

24. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ առկա չեն եղել ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար: Տվյալների վրա հաշվեքննության կենտրոնացումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ *տվյալահեն (ապացույցների վրա հիմնված) քաղաքականության* մշակումից և իրականացումից է կախված լինելու օդի որակի բարելավման խնդրի *համակարգային* լուծումը:

Վնասակար նյութերի արտանետումների վերաբերյալ տվյալներ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

25. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ առկա չեն համապարփակ տվյալներ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակի մասին (համապարփակ գույքագրում): Մասնավորապես, արձանագրվել էր, որ ՀՀ պաշտոնական վիճակագրությունը չի պարունակում համապարփակ տվյալներ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակի մասին[15]:

[15] ՀՀ պաշտոնական վիճակագրությունը ներառել է տվյալներ այն անշարժ աղբյուրների մասով (կազմակերպությունների / անհատ ձեռնարկատերերի ներկայացրած վարչական վիճակագրական հաշվետվությունների հիման վրա), որոնց նախագծային առավելագույն արտանետումները բավարարում են օդի պահանջվող օգտագործմանը, որը *մեծ է 200 մլն խոր. մ/տարի* ծախսից, ինչպես նաև շարժական աղբյուրներից արտանետված վնասակար նյութերի քանակի վերաբերյալ (շարժական աղբյուրներից արտանետումների գույքագրումն իրականացվում է ներմուծված վառելիքի հիման վրա): Մնացյալ մասով պաշտոնական վիճակագրական հաշվառում չի իրականացվել:

26. Համապարփակ գույքագրումը ենթակա է իրականացման «Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի շրջանակում: Այնուհանդերձ, գույքագրման 2024թ. արդյունքների համաձայն, բացակայել են տվյալներ այնպիսի աղբյուրների մասով, ինչպիսիք են օրինակ՝ անօրգանական պարարտանյութերից, կենդանական ծագման օրգանական պարարտանյութերից, գյուղատնտեսական մնացորդների դաշտային այրումից (գյուղատնտեսություն), տնային տնտեսություններից և այգեգործությունից (շարժական), թափոններից (այդ թվում՝ թափոնների բաց այրումից), արդյունաբերության մի շարք ճյուղերից, ճանապարհների ասֆալտապատումից արտանետումները և այլն[16]:

27. Ըստ աղբյուրների մթնոլորտ արտանետումների համապարփակ գույքագրման բացակայության պայմաններում, սահմանափակվում է աղտոտվածության նվազեցման հասցեական միջոցառումների պլանավորման և իրականացման հնարավորությունը:

28. Բացի այդ, արտանետումների կրճատման տարբեր սցենարներ կարող են ունենալ տարբեր «գին»՝ ծախսեր հանրային ֆինանսների, բիզնեսների ու տնային տնտեսությունների համար: Գույքագրման համապարփակ արդյունքներն անհրաժեշտ են սցենարային վերլուծությունների միջոցով ամենածախսարդյունավետ սցենարների մշակման և օդի որակի բարելավման ռազմավարությունները / միջոցառումների ծրագրերը այդ հենքի վրա կառուցելու համար:

29. Ըստ այդմ, առաջարկվել էր իրականացնել մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի համապարփակ գույքագրում՝ ըստ արտանետման աղբյուրների *(Առաջարկություն N 2)*:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

30. Շրջանառության մեջ է դրվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը[17], որով նախատեսվում է օրենքում ամրագրել լիազորող նորմեր մթնոլորտն աղտոտող շարժական և անշարժ աղբյուրներից արտանետումների հաշվարկման մեթոդական ուղեցույցներ հաստատելու վերաբերյալ:

[16] Աղբյուր՝ Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիայի շրջանակում վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների գույքագրման արդյունքներ, 2024թ. հաշվետվություն, աղյուսակ 28:

[17] https://www.e-draft.am/projects/8757/about:

31. Մշակվել և 2025 թվականի նոյեմբերի 24-ին հանրային քննարկման է ներկայացվել «**Շարժական աղբյուրներից** մթնոլորտն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների հաշվարկման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծը[18]:

32. Մշակվել և 2025 թվականի նոյեմբերի 25-ին հանրային քննարկման է ներկայացվել նաև «**Անշարժ աղբյուրներից** մթնոլորտն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների հաշվարկման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» Շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծը[19]:

33. Վերոնշյալ ուղեցույցների նախագծերը մշակվել են ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի Եվրոպական մոնիթորինգի և գնահատման ծրագրի / Եվրոպական շրջակա միջավայրի գործակալության (EMEP/EEA) օդի աղտոտիչների արտանետումների հաշվարկման ուղեցույցի հիման վրա:

34. Զուգահեռ ընթանում են նաև համապարփակ գույքագրման համար տվյալների միասնական ձևաչափի մշակման աշխատանքներ: Մասնավորապես, նախագծվում են լրացումներ Կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 23-Ն որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման և հաշվառման վերաբերյալ տեղեկատվության ամփոփման, վերլուծման և արխիվացման կարգ»-ում, որոնցով նախատեսվում է սահմանել.

- մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի *համապարփակ* հաշվառման ձևաչափ՝ ինչպես անշարժ, այնպես էլ շարժական աղբյուրների համար.
- հստակ *ժամկետներ* մթնոլորտն աղտոտող աղբյուրներից համապարփակ գույքագրման տվյալները Վիճակագրական կոմիտե ներկայացնելու համար:

35. Նշված առաջարկության կատարման ժամկետ է սահմանվել 2026 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակը:

[18] https://www.e-draft.am/ru/projects/9420/about:

[19] https://e-draft.am/index.php/projects/9439/justification:

Վնասակար նյութերի կոնցենտրացիաների վերաբերյալ տվյալներ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

36. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ մթնոլորտային օդի մոնիթորինգի ՀՀ դիտացանցն արդիական չէ: Այն ձևավորվել է խորհրդային շրջանում և չի բավարարում արդի չափանիշներին: Մասնավորապես, արձանագրվել էր, որ.

- **մարդու առողջության վրա ազդեցության ու վաղաժամ մահերի առաջացման տեսանկյունից ամենամեծ վտանգավորությունն ունեցող $PM_{2.5}$ մասնիկների պաշտոնական մոնիթորինգ չի իրականացվել**[20]: Չի իրականացվել նաև PM_{10} մասնիկների մոնիթորինգ: Փոխարենը իրականացվել է չտարբերակված փոշու մոնիթորինգ: Դրականորեն արձանագրվել էր այն, որ Երևանի քաղաքապետարանի պահանջով շինարարական հրապարակներում տեղադրվել էին $PM_{2.5}$ մասնիկների կոնցենտրացիաների գնահատման սարքավորումներ: Վերջիններս, սակայն, չեն բավարարել պաշտոնական մոնիթորինգի սարքավորումների չափանիշներին, ինչպես նաև չէին անցել ստուգաճշտում.
- **իրական ժամանակում օդի աղտոտվածության վերաբերյալ պաշտոնական տվյալներ հասանելի չեն եղել:** ՀՀ-ում աղտոտիչների վերաբերյալ հրապարակվել են շաբաթական պաշտոնական տվյալներ՝ շաբաթվա ավարտից երկու օր անց[21]: Ըստ միջազգային չափանիշների, անհրաժեշտ է օդի աղտոտիչների վերաբերյալ տեղեկատվության՝ իրական ժամանակում հասանելիություն, որպեսզի մարդու առողջության համար օդի աղտոտվածության վտանգավոր մակարդակի պայմաններում քաղաքացիները կարողանան ճշգրտել իրենց վարքագիծը.

[20] Թեև $PM_{2.5}$ կախված մասնիկների ՍԹԿ-ի նորմատիվը սահմանվել է 2013 թվականին:
[21] https://meteomonitoring.am/post/1344:

- **չեն իրականացվել օդի աղտոտվածության կանխատեսումներ**, որոնք թույլ կտային հատկապես բնակչության խոցելի խմբերին (տարեցներ, երեխաներ, շնչառական և այլ քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք) խուսափել օդի աղտոտվածության բացասական ազդեցություններից կամ ձեռնարկել պաշտպանական միջոցառումներ.
- անհնար էր պոտենցիալ արտակարգ իրավիճակների դեպքում ազդարարման և արձագանքման նպատակային միջոցառումների **ժամանակին** իրականացումը.
- **բացակայել էր միջազգային չափանիշներին համապատասխանող ռեֆերենս լաբորատորիա**, որը թույլ կտար իրականացնել մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի սարքավորումների ստուգաճշտում.
- **մոնիթորինգի մեթոդները չէին համապատասխանել ԵՄ դիրեկտիվներով սահմանված ստանդարտներին**՝ ստեղծելով հրապարակվող տվյալների որակի / հուսալիության ռիսկեր.
- **չէր երաշխավորվել նաև դիտացանցի ներկայացուցչականությունը:** Մասնավորապես, ըստ գործող կարգավորումների, Գյումրի քաղաքում պետք է գործեր առնվազն 3 դիտակետ՝ գործած 1-ի փոխարեն.
- այն տարածքներում, որտեղ օդի որակի մոնիթորինգ չի իրականացվում, որպես օդի որակի մոնիթորինգին աջակցող մեթոդ, չէր կիրառվել **օդի որակի մոդելավորում**:

37. Ըստ այդմ, առաջարկվել էր մշակել մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման ծրագիր՝ վերազինման ենթակա առաջնահերթ դիտակայանների սահմանված ժամանակագրական հաջորդականությամբ *(Առաջարկություն N 3)*:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

38. Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 611-Լ որոշմամբ հաստատվել է «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիր»-ը: Որոշման հավելվածի 1-ին կետով սահմանվել է մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացումը:

39. Մասնավորապես, նախատեսվել է՝

- մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համար 14 նոր անշարժ և 2 շարժական դիտակայանների ձեռքբերում.
- միջազգային ստանդարտներով հավատարմագրված համապատասխան ռեֆերենս լաբորատորիայի հիմնում.
- մթնոլորտային օդի որակի մոդելավորման, կանխատեսման համակարգի (ծրագրի) ստեղծում և կիրարկում:

40. Մթնոլորտային օդի մոնիթորինգի համակարգի արդիականացման և այն միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով ձեռք է բերվել մթնոլորտային օդի որակի ժամանակակից երկու անշարժ ավտոմատ դիտակայան: Դիտակայանները տեղադրվել են Կենտրոն համայնքի Երվանդ Քոչար 6/1 հասցեում և Քանաքեռ-Զեյթուն համայնքի Դավիթ Անհաղթի զբոսայգում: Ընթանում են ծրագրային կարգավորման և շահագործման հանձնման աշխատանքները:

41. 2025 թվականի սեպտեմբերի 29-ին Շրջակա միջավայրի նախարարությունը և Ճապոնիայի կառավարությունը ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև հայտագրերի փոխանակման ձևով «Տնտեսական և սոցիալական զարգացում» դրամաշնորհի տրամադրման համաձայնագիր, որի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել ժամանակակից ավտոմատ սարքավորումներ (ճապոնական Horiba ընկերության արտադրության) մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի երեք դիտակայանի համար՝ հիմնական աղտոտիչների չափման նպատակով (պայմանագրով ժամկետ է սահմանված 2026 թվականը):

42. Կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև 2024 թվականի տարեկան գործողությունների ծրագրերի շրջանակում բանակցվող «Reform and CEPA Implementation Facility» համալրվող ֆինանսական համաձայնագրի շրջանակում նախատեսվում է ունենալ մթնոլորտային օդի որակի գնահատման երկու դիտակայան (ծրագրով ժամկետ է սահմանված 2027 թվականը):

43. ԵՄ պատվիրակությանը ներկայացված «Մաքուր օդ առողջության և կանաչ աճի համար Հայաստանում» ծրագրային հայտի շրջանակում նախատեսվում է ունենալ մթնոլորտային օդի որակի գնահատման ևս երկու դիտակայան (ծրագրային հայտով ժամկետ է սահմանված 2028 թվականը):

44. Կառավարության 2025թ. օգոստոսի 14-ի «Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշների, աղտոտվածության չափման մեթոդների և ստանդարտացված չափման մեթոդների, ինչպես նաև աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշների վերաբերյալ կարգը հաստատելու մասին» թիվ 1142-Ն որոշմամբ սահմանվել են աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշները, մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի կոնցենտրացիաների չափման առաջարկվող հղումային (ռեֆերենս) ստանդարտացված չափման մեթոդները:

45. Մշակվել է «Մթնոլորտային օդի պետական մոնիթորինգի իրականացման, ստացված տվյալների հավաքման, վերլուծության, գնահատման և տեղեկատվության տրամադրման կարգը և մոնիթորինգի ցուցանիշները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը[22], որը նախատեսում է ամրագրում առ այն, որ մթնոլորտային օդի որակի պետական մոնիթորինգն իրականացնում և մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է միայն մասնագիտական կառույցը (ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը), նախատեսում է մթնոլորտային օդի պետական մոնիտորինգի իրականացման, ստացված տվյալների հավաքման, վերլուծության և գնահատման մեթոդաբանություններն ու եղանակները, մթնոլորտային օդի որակի վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգերը, վթարների, հրդեհների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ իրականացվող քայլերը:

[22] https://www.e-draft.am/projects/9014/justification:

Ներդրվել է տվյալ բնագավառում հանրային կառավարման մարմինների գործողությունների կոորդինացման մեխանիզմ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

46. Հաշվեքննության ընթացքում նշանակալի էր համարվել օդի որակի կառավարման համապետական մոտեցումը (whole-of-government approach)՝ նկատի ունենալով մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման գործառույթների և դրանք իրականացնող հանրային կառավարման մարմինների մեծաթիվ լինելը: Վերջինս հաշվի առնելով, այդ մարմինների ջանքերը կարող են ներդաշնակեցվել կոորդինացման (հորիզոնական և ուղղահայաց) իրավական մեխանիզմի շրջանակում:

47. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ.

- չնայած ՄՕՊՄՕ պահանջին[23], մարզերի բնապահպանական ծրագրերի կազմում մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ նախատեսված չեն եղել.
- մթնոլորտային օդի որակի պլանների մշակման, դրանց բովանդակության, թարմացման, կատարման վերաբերյալ հաշվետվողականության և այլ պահանջներ ազգային օրենսդրությամբ սահմանված չեն եղել:
- շահագրգիռ և պատասխանատու պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կոորդինացնող իրավական մեխանիզմներ ներդրված չեն եղել: Դրական փորձ է դիտվել այն, որ ՀՀ համայնքներից Երևանի քաղաքապետարանը 2025 թվականին մշակել է օդի որակի բարելավման ծրագիր: Վերջինս, սակայն, ՇՄՆ-ի հետ նախապես չէր համաձայնեցվել[24]: Ծրագիրը չի պարունակել նաև չափելի թիրախներ և միջոցառումների իրականացման ֆինանսական գնահատական (բյուջե):

48. Ըստ այդմ, առաջարկվել էր՝

- մշակել օդի որակի բարելավման մարզային և համայնքային պլանների պահանջներ, այդ թվում՝ դրանց բովանդակության, ազգային պլանի հետ ներդաշնակեցման, կատարման վերաբերյալ հաշվետվողականության *(Առաջարկություն N 6)*.

[23] Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:
[24] Ըստ ՇՄՆ-ից 31.03.25թ.-ին ստացված տեղեկատվության:

- ներդնել օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումների կոորդինացման (ուղղահայաց և հորիզոնական) իրավական մեխանիզմ *(Առաջարկություն N 7):*

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

49. Մթնոլորտային օդի աղտոտվածության խնդիրների լուծման նպատակով 2025 թվականի դեկտեմբերի 10-ին ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ[25]:

50. Նախատեսվում է մշակել «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգման միջգերատեսչական խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ:

51. Ըստ Նախարարության, արդյունքում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումներն առավել նպատակային, համակարգված, վերահսկելի և կառավարելի կլինեն:

52. Առաջարկության կատարման ժամկետ է սահմանվել 2027 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակը:

53. Շրջանառվել է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը[26], որով նախատեսվում է ամրագրել օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույց մշակելու և հաստատելու վերաբերյալ լիազորող նորմ, ինչպես նաև դրույթ այն մասին, որ տեղական ինքնակառավարման մարմինները մշակում և հաստատում են բնակավայրերում մթնոլորտային օդի որակի պահպանության պլանները՝ նախապես համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ: Ըստ նախագծի, մթնոլորտային օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույցը նախատեսվում է լիազոր մարմնի կողմից հաստատել՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ **երեք տարվա ընթացքում**:

[25] Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 1145-Ա որոշում:
[26] https://www.e-draft.am/projects/8757/about:

54. Ըստ Նախարարության, Մթնոլորտային օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույցն ուղենիշ կհամարվի համայնքներում օդի որակի պահպանության պլաններ կազմելու, պլաններից բխող ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ միջոցառումներ սահմանելու համար:

55. Բացի այդ, մշակվել և 2025 թվականի օգոստոսի 14-ին հաստատվել է «Գոտիների և ագլոմերացիաների դասակարգման մասին» Կառավարության N 1145-Ն որոշումը, համաձայն որի՝ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի իրականացման, արտանետումների վերահսկման և կառավարման նպատակով հանրապետության տարածքը բաժանվել է ագլոմերացիայի (Երևան քաղաք) և գոտիների, որը ստեղծում է նախադրյալներ յուրաքանչյուր գոտում կամ ագլոմերացիայում օդի որակի պահպանության պլաններ մշակելու համար: Հիմք են ընդունվել վերաբերելի ԵՄ չափանիշները:

56. Առաջարկության կատարման ժամկետ է սահմանվել 2026 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակը:

Հետագա բարելավման ներուժը

Թիրախներ

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

57. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում պետական կառավարման նպատակով սահմանված չեն եղել օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի ու ոլորտային արտանետումների կրճատման թիրախներ (այդ թվում՝ ծրագրային բյուջետավորման համատեքստում) և դրանց հասնելու համակարգված միջոցառումներ:

58. Այս համատեքստում, որպես լավագույն փորձ էր դիտարկվել ԵՄ-ում օդի որակի կառավարման օրինակը: Մասնավորապես, օդի աղտոտվածության նվազեցման բնագավառում ԵՄ միջոցառումները կառուցված են $PM_{2.5}$-ով պայմանավորված *վաղաժամ մահերը մինչև 2030 թվականը* ***55%-ով*** *նվազեցնելու* թիրախի շուրջ[27]: Վերջինս նախատեսվում է ապահովել ԵՄ 2016/2284 դիրեկտիվով ԵՄ անդամ յուրաքանչյուր պետության համար սահմանված՝ ըստ աղտոտիչների (5 հիմնական աղտոտիչի գծով) արտանետումների նվազեցման թիրախների միջոցով: Դիրեկտիվը պահանջում է, որ անդամ պետությունները.

- իրականացնեն հիմնական աղտոտիչների գծով *արտանետումների գույքագրում*.

[27] 2005 թվականի բազային տարվա համեմատությամբ:

- ընդունեն *օդի աղտոտվածության նկատմամբ հսկողության ազգային ծրագրեր*, որոնք ցույց կտան, թե երկրներն ինչպես են հասնելու արտանետումների նվազեցման 2020-2029թթ. հանձնառություններին և 2030թ.-ից հետո սահմանված ավելի հավակնոտ հանձնառություններին:

59. Հարկ է նկատել, որ ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման թիրախի սահմանումը և դրանց հասնելուն ուղղված ռազմավարական կառավարումը տվել է շոշափելի արդյունքներ. 2005-2022 թվականների ընթացքում ԵՄ-ում օդի աղտոտվածությամբ ($PM_{2.5}$) պայմանավորված վաղաժամ մահերի թիվը կրճատվել է 45%-ով՝ մոտենալով 2030 թվականին համար սահմանված 55%-ով կրճատման թիրախի ապահովմանը[28]:

60. Առաջարկվել էր սահմանել օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման[29], ինչպես նաև դրա համար անհրաժեշտ՝ ըստ աղտոտման աղբյուրների արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշներ և դրանց հասնելու վերջնաժամկետներ՝ դրանք ընդգրկելով ծրագրային բյուջետավորման համատեքստում արդյունքային ցուցանիշների կազմում *(Առաջարկություն N 4):*

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ

61. Ըստ Նախարարության, Ծրագրային բյուջետավորման համատեքստում կսահմանվեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մարդու առողջության համար վնասակար նյութերի, մասնավորապես՝ կախված մասնիկների ($PM_{2.5}$ և PM_{10}) արդյունքային ցուցանիշները: Արդիականացված դիտացանցի միջոցով իրականացվող մթնոլորտային օդի որակի գնահատման ժամանակ հնարավոր կլինի ունենալ մթնոլորտային օդի աղտոտվածության, մասնավորապես՝ $PM_{2.5}$ և PM_{10} աղտոտիչներով աղտոտվածության իրական պատկեր, գնահատելի ելակետային տվյալներ: Տվյալների վերլուծության արդյունքում հնարավոր կլինի հստակ սահմանել գնահատելի արդյունքային ցուցանիշներ և իրականացնել նպատակային քաղաքականություն՝ սահմանված ժամկետում ցանկալի արդյունքային ցուցանիշներին հասնելու համար:

62. Որպես նշված առաջարկության կատարման ժամկետ է սահմանվել 2029 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը:

[28] Մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացության Ներդիր 3-ում:

[29] ԱՆ-ի հետ փոխհամաձայնեցված:

Ռազմավարություն

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆԵՐԸ

63. Հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ մթնոլորտային օդի որակի կառավարման / աղտոտվածության նվազեցման ռազմավարություն[30] և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագիր չի գործել: 2023 թվականին լրացել է Կառավարության 2018թ. մարտի 22-ի նիստի N 11 արձանագրային որոշմամբ հաստատված՝ «Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարության» գործողության ժամկետը, որից հետո նոր ռազմավարական փաստաթուղթ չի մշակվել[31]: Ավելին, նշված ռազմավարությունն ինքնին չի պարունակել թիրախներ և ըստ աղտոտման աղբյուրների *համալիր* միջոցառումներ:

Օրինակ՝

- նախատեսված չեն եղել միջոցառումներ տրանսպորտից արտանետումների նվազեցման համար: Առկա չեն եղել գնահատումներ, թե Հանրապետության տրանսպորտային պարկի և դրա նկատմամբ հսկողության վիճակը (տրանսպորտային միջոցների տարեթիվ, շարժիչի տեսակ, շարժիչի հզորություն, ըստ ԵՎՐՈ ստանդարտների մեքենաների թիվ, էլ. տրանսպորտի տեսակարար կշիռ, չեզոքացուցիչների առկայություն և սարքինություն, տեխզննության գործընթացի արդյունավետություն և այլն) ինչպիսի ազդեցություն է ունենում ՀՀ-ում օդի աղտոտվածության վրա: Ըստ ՏԿԵՆ-ի, 2024թ. տեխնիկական զննություն անցած 533128 տրանսպորտային միջոցներից անսարք է ճանաչվել 232-ը կամ 0.04%-ը: Հատկանշական է, որ օդի աղտոտվածության տեսանկյունից նշանակալի պարամետրերի[32] համար սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով տրանսպորտային միջոցների անսարք ճանաչվելու փաստեր չեն արձանագրվել:

[30] Ռազմավարության առկայությունը նախատեսվում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ ստանձնված միջազգային պարտավորություններով, որոնց վերաբերյալ մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացության 45-49-րդ կետերում:

[31] Ռազմավարությունը փաստացի ավելի վաղ է գործողությունը դադարեցրել՝ 2021թ. արձանագրային որոշումների ուժը կորցնելով պայմանավորված:

[32] Բենզինային և գազաբալոնային շարժիչի բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի՝ CO, ածխածնի դիօքսիդի՝ CO2 ածխաջրածինների՝ CH, ազոտի օքսիդների՝ NOx) պարունակության ստուգում (601) Դիզելային շարժիչի ծխայնության ստուգում և ազոտի օքսիդների՝ Nox, ածխածնի օքսիդի՝ CO, ածխաջրածինների՝ CH պարունակության ստուգում (602)Չեզոքացուցիչների առկայության և սարքինության բանած գազերի արտածման համակարգի համալրվածության և այրվածքների, մեխանիկական ծակվածքների ու անկիպությունների առկայության ստուգում (604):

Ըստ ՏԿԵՆ-ի, տեխնիկական զննության կայանների կողմից աշխատանքային կարգով ներկայացված տեղեկատվության համաձայն, 2021-2023թթ. ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների արտանետումների մակարդակի և ծխայնության չափման արդյունքում ՀՀ-ում որևէ տրանսպորտային միջոց անսարք չի ճանաչվել: Բացակայել են չեզոքացուցիչների առկայության և սարքինության ստուգման վերաբերյալ տվյալներ: Թեև օրենսդրությունը սահմանում է[33] Ոստիկանության ու բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցների կողմից ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումներ իրականացնելու նպատակով տրանսպորտային միջոցներ կանգնեցնելու ընթացակարգ և չափումների հիման վրա վտանգավոր տրանսպորտային միջոցների շահագործումն արգելելու հնարավորություն, որևէ նման պահանջ (հաղորդում) տեսչական մարմնի կողմից Ոստիկանությանը 01.01.2023թ.-ից մինչև 28.02.2025թ. ընկած ժամանակահատվածը չի ներկայացվել: Սահմանափակ տվյալների ու թույլ հսկողության պայմաններում, սահմանափակվել է օդի աղտոտվածության տեսանկյունից նշանակալի համարվող տվյալ ոլորտից արտանետումների կառավարման գործընթացի արդյունավետությունը:

- նախատեսված չեն եղել միջոցառումներ՝ ուղղված արդյունաբերությունից արտանետումների նվազեցմանը, այդ թվում՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման մասով: Արտանետման անշարժ աղբյուրներից անջատված վնասակար նյութերի քանակը կազմել է 380.2 հազ. տ, որի 69.3%-ը որսվել է, մնացած 30.7%-ը՝ արտանետվել մթնոլորտ[34]: Պլանավորվող լավագույն հասանելի տեխնոլոգիաների՝ մթնոլորտ արտանետումների կրճատման վրա քանակական ազդեցության գնահատում չի իրականացվել:
- նախատեսված չեն եղել տնային տնտեսություններից արտանետումների գնահատման ու նվազեցման միջոցառումներ, այդ թվում՝ ջեռուցումից առաջացող արտանետումների մասով:

[33] Կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2410-Ն որոշման հավելվածի 4-րդ և 6-րդ կետեր:
[34] Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2023թ, 2024, ՎԿ:

- նախատեսված չեն եղել գյուղատնտեսությունից արտանետումների գնահատման ու նվազեցման միջոցառումներ: Այդ համատեքստում էական է գյուղատնտեսության բնագավառում իրականացվող պետական աջակցության (սուբսիդավորման) ծրագրերի բնապահպանական արդյունավետությունը: Առկա չեն եղել ոլորտային քաղաքականության միջոցառումների՝ օդի աղտոտվածության վրա ազդեցության գնահատման մեխանիզմներ (օրինակ, սուբսիդավորման ծրագրերի միջոցով պարարտանյութերի օգտագործումն անուղղակիորեն խթանելու հնարավոր ազդեցությունը ամոնիակի, ապա նաև՝ կախված մասնիկների կոնցենտրացիայի վրա):

64. Արձանագրվել էր նաև, որ օդի որակին միտված ոլորտային միջոցառումների ազդեցության գնահատումներ չեն իրականացվում, որոնք թույլ կտային վերլուծել իրականացվող միջոցառումների արդյունավետությունը և իրականացնել ընթացիկ ճշգրտումներ՝ սահմանված նպատակներին հասնելու համար:

65. Ըստ այդմ, առաջարկվել էր ազդեցության քանակական գնահատումների և սցենարային վերլուծությունների հիման վրա[35], ըստ անհրաժեշտության՝ միջազգային տեխնիկական աջակցությամբ, մշակել օդի որակի բարելավման ազգային ռազմավարություն և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագիր, որը թույլ կտա հասնել վերոնշյալ թիրախներին ծախսարդյունավետ եղանակով *(Առաջարկություն N 5):*

[35] Առաջարկություն N2-ի կատարմամբ ձևավորված հնարավորինս ամբողջական գույքագրման արդյունքների օգտագործմամբ:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ

66. Ըստ Նախարարության, մշակվելու է «Մարդկային կապիտալի և բարեկեցության» ռազմավարություն[36], որում ներառվելու է շրջակա միջավայրի պահպանության մասը՝ ընդգրկելով շրջակա միջավայրի բաղադրիչների, այդ թվում՝ մթնոլորտային օդին վերաբերող մասերը: Մշակվելիք ռազմավարությունում մթնոլորտային օդին վերաբերող առավել խորքային վերլուծություն իրականացնելու և համապարփակ լուծում տալու համար ռազմավարական ծրագիր մշակելու պահանջն արտացոլելու դեպքում՝ կմշակվի ոլորտային ռազմավարական ծրագիր:

67. Ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում կներառվի «Միջազգային տեխնիկական աջակցությամբ ազդեցության քանակական գնահատումների և սցենարային վերլուծությունների իրականացում՝ օդի աղտոտվածության և վաղաժամ մահերի ցուցանիշների միջև»՝ կատարող և համակատարողներ նշանակելով նաև Առողջապահության նախարարությանն ու այլ շահագրգիռ գերատեսչություններին:

68. Տվյալ առաջարկության կատարման ժամկետ է սահմանվել 2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը:

69. *Սույն բաժնում չեն կրկնվում «Առաջընթացը» բաժնում ներկայացված, սակայն դեռևս ամբողջությամբ չկատարված այն առաջարկություններին ու հաշվեքննության արձանագրումներին վերաբերելի տեղեկությունները, որոնք պարունակում են հետագա բարելավման ներուժ:*

[36] Հիմք ընդունելով 2025 թ. սեպտեմբերի 18–ի N1342-Լ որոշմամբ Կառավարության N252-Լ որոշման մեջ կատարված փոփոխությունը՝ Հավելվածի 159-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

Հետհսկողության մասին

ՀԵՏՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

70. Հետհսկողությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հունվարի 30-ի թիվ 15-Ա որոշմամբ հաստատված հաշվեքննության առաջադրանքի հիման վրա իրականացված հաշվեքննության արդյունքներն ամփոփող՝ Հաշվեքննիչ պալատի 2025 թվականի ապրիլի 15-ի թիվ 27-Ա որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացության արդյունքների, ներկայացված առաջարկությունների, դրանց հիման վրա ՇՄ նախարարության ներկայացրած միջոցառումների ծրագրի կատարման նկատմամբ: Տվյալ հաշվեքննությունը նախատեսված է եղել Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի գործունեության ծրագրի 2-րդ մասի 7-րդ ծրագրային կետով, որի իրականացմամբ իրագործվել է Հաշվեքննության 2024-2026 թվականների միջնաժամկետ առաջնահերթություններից 3.1-րդ ուղղությունը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄԸ

71. Առարկան. Հաշվեքննության ընթացքում գնահատվել էր օդի աղտոտվածության նվազեցումը:

72. Նպատակը. Տվյալ հաշվեքննության նպատակն էր՝ գնահատել մարդու առողջությունը օդի աղտոտվածությունից պաշտպանելուն ուղղված հանրային քաղաքականության միջոցառումների արդյունավետությունը և գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնել օդի պահպանության կառավարման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

73. Հարցերը. Հաշվեքննության էին ենթարկվել ձևակերպված նպատակից բխող հետևյալ հարցերը.

- Օդի որակի ՀՀ ստանդարտները ապահովո՞ւմ են արդյոք օդի աղտոտվածությունից մարդու կյանքի ու առողջության բավարար պաշտպանություն.
- Առկա՞ են արդյոք ժամանակին, որակյալ և համապարփակ տվյալներ՝ օդի պահպանության արդյունավետ կառավարում իրականացնելու համար.
- Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում իրականացվե՞լ է արդյոք արդյունավետ ռազմավարական կառավարում:

74. Մոտեցումը. Կատարողականի հաշվեքննությունն իրականացվել էր *համակարգին և խնդրին միտված* մոտեցումներով:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ ՄԱՐՄԻՆԸ

75. Հաշվեքննության ենթակա մարմինը (օբյեկտը) Շրջակա միջավայրի նախարարությունն էր:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

76. Որպես հաշվեքննության չափանիշների աղբյուրներ էին դիտարկվել հաշվեքննության առարկային վերաբերելի ՀՀ օրենսդրությունն ու միջազգային լավագույն փորձը, այդ թվում՝ մարդու առողջության տեսանկյունից հաշվեքննության առարկայի առնչությամբ գլոբալ առաջնորդություն ստանձնած մարմնի՝ ԱՀԿ-ի ուղեցույցները: Մանրամասները ներկայացված են ընթացիկ եզրակացությունում:

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

77. Հետհսկողությունն ընդգրկել է 2025 թվականի ապրիլից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածը:

ՀԵՏՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԽՈՒՄԲԸ

78. Հետհսկողությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի կատարողականի հաշվեքննության վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Ժիրայր Մխիթարյանը:

Ժիրայր Մխիթարյան
Հաշվեքննիչ պալատի անդամ
25 դեկտեմբերի, 2025 թվական
Հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան 19, ք. Երևան
Հայաստանի Հանրապետություն

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒԺԵՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բաղրամյան 19
www.armsai.am, secretariat@armsai.am